«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում առաջարկվող փոփոխությունները և լրացումները

Հոդված 7. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող՝ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի, 7-րդ հոդվածի, ինչպես նաև սույն օրենքի 2-րդ հոդվածով Օրենքում լրացվող 7.2-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում Հանրապետության նորընտիր նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

2. Սույն օրենքի ուժով, որպես ինքնավար մարմին, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) առաջին կազմը ձևավորվում է հետևյալ կերպ՝ Հանրապետության նորընտիր նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրվանից հետո ոչ ուշ, քան մինչև 2019 թվականի հունիսի 30-ը, Ազգային ժողովը վարչապետի առաջարկությամբ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակում է Հանձնաժողովի նախագահին և չորս անդամներին պաշտոնավարման հետևյալ ժամկետներով՝

1) Հանձնաժողովի նախագահ՝ 5 տարի.

2) Հանձնաժողովի անդամ՝ 4 տարի.

3) Հանձնաժողովի անդամ՝ 3 տարի.

4) Հանձնաժողովի անդամ՝ 2 տարի.

5) Հանձնաժողովի անդամ՝ 1 տարի:

2.1. Հանձնաժողովի առաջին կազմի անդամների լիազորություններն օրենքով սահմանված կարգով դադարելու կամ դադարեցվելու դեպքում Հանձնաժողովի նախագահի թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունք ունի Կառավարությունը, իսկ Հանձնաժողովի մյուս անդամների թափուր պաշտոններում թեկնածու առաջադրելու իրավունք ունեն հաջորդաբար՝ Կառավարությունը, Ազգային ժողովի կառավարող խմբակցությունը և Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունը:

3. Հանձնաժողովի այն անդամները, որոնք նշանակվել են մինչև Հանրապետության նորընտիր նախագահի կողմից իր պաշտոնը ստանձնելու օրը, շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց լիազորությունների՝ օրենքով սահմանված ժամկետի ավարտը, բայց ոչ ավելի, քան սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված նշանակումները կատարելը, մասնավորապես՝

1) Հանձնաժողովի գործող նախագահը՝ մինչև Հանձնաժողովի նոր նախագահի նշանակումը.

Deleted: հանձնաժողովի

Deleted: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը Հայաստանի Հանրապետության վարչապետի

Deleted: սույն

Deleted: հանձնաժողովի

Deleted: հանձնաժողովի

Deleted: հանձնաժողովի

Deleted: հանձնաժողովի

Deleted: հանձնաժողովի

Deleted: հանձնաժողովի

Deleted: Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի

Deleted: հանձնաժողովի

Deleted: հանձնաժողովի

2) Հանձնաժողովի յուրաքանչյուր նոր անդամի նշանակմամբ դադարում են Հանձնաժողովի գործող չորս անդամներից այն անդամի լիազորությունները, որը մյուս անդամներից ավելի շուտ է նշանակվել: Հանձնաժողովի գործող անդամի լիազորությունները դադարում են նաև այն դեպքում, եթե նա սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով նշանակվել է հանձնաժողովի նախագահ կամ հանձնաժողովի անդամ:

Deleted: հանձնաժողովի

Deleted: հանձնաժողովի